№ 102 Յունիսի 18 (30) 1880 Յունիսի 18 (30) № 102

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նուիրատուութիւնների նշանակութիւնը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Նոր-Նախիջևանից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Սովը Հայաստանում։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Գերմանիայից։—Յայտարարութիւններ։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Հաստատ աղբիւրներից մեզ հաղորդում են, որ Ռուսաստանից և ուրիշ երկիրներից սովատանջ հայաստանցիներին ուղարկված նուիրատուութիւնները մեծ տպաւորութիւն գործեցին թէ թիւրքաց հայերի և թէ թիւրք կառավարութեան ու մահմետական ազգաբնակութեան վրա։

Հայերի վրա արած տպաւորութիւնը բարեյաջող էր, իսկ թիւրք թէ կենտրոնական և թէ գաւառական կառավարութեան վրա ու մահմետական ազգաբնակութեան վրա արած տպաւորութիւնը սարսափեցնող էր։

Հայերը, ինչքան էլ սոված, թշուառ էին, զգացին որ անօգնական չեն և սիրտ առան։ Շատերը կամենում էին գաղթել Հայաստանից, բայց երբ տեսան թէ ամեն կողմից նիւթական օգնութիւն են ստանում, վճռեցին մնալ իրանց հայրենիքում, տանելով բոլոր տանջանքները։ Հայերը սկսեցին իրանց ոյժը զգալ, երբ տեսան, որ ոչ թէ միայն հայերին կարող են օգնել, բայց կարող են իրանց միջոցներով օգնել և Հայաստանի անօգնական թիւրք ու քիւրդ ազգաբնակութեանը։

Ուրիշ կողմից թիւրք ու քիւրդ, մի խօսքով Հայաստանի մահմետական ազգաբնակութիւնը ակամայ սկսեց ինքն իրան հետևեալ հարցն առաջարկել. «Հայերը, որ կառավարութիւն չունեն, կարող են ամեն կողմից ահագին օգնութիւն ստանալ, իսկ մենք, ունենալով մի հզօր կառավարութիւն, ոչինչ օգնութիւն չենք ստանում մեր այդ կառավարութենից։»

Վանի առաջնորդարանը լի էր բացի հայ սովածներից, թիւրք և քիւրդ մուրացկաններով, որոնք Խրիմեան հայրիկի ձեռքից օգնութիւն էին ստանում։

Ասում են որ Վանի տեղական թիւրք կառավարութեան ներկայացուցիչները շփոթված, շուարած մնացին, տեսնելով թէ ինչ ահագին, ներքին բարոյական ոյժ ունի հայերի պէս մի փոքրիկ, աննշան, իր կառավարութիւնը չունեցող, ճնշված, ամեն տեղ ցիր ու ցան եղած ազգութիւնը։ Շատերը թիւրք իշխանաւորներից ամաչում էին ուղղակի հայի երեսին նայել....

Թիւրք և քիւրդ ազգաբնակութիւնը որ առաջ արհամարհում էր հայերին, մեծ յարգանք սկսեց զգալ դէպի այդ կորած ազգը և ընդհակառակն նրա մէջ ծնունդ առաւ արհամարհանք դէպի իր կառավարութիւնը։

Այդ աջող հանգամանքներից հայերը պէտք է այժմ իմանան օգուտ քաղել, պէտք է իմանան այսուհետև բարոյապէս դէպի իրանց գրաւել Հայաստանում բընակվող մահմետական ազգաբնակութիւնը։

Բացի սորանից պէտք է դեռ շարունակենք մեր նուիրատուութիւնները, որպէս զի շարունակենք օգնել հայաստանցիներին և մեր արդէն վաստակած յարգը պահպանենք մահմետականների աչքում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Մայիսի 10-ին

Պատիւ ունիմ առաքել ձեզ Ն.-Նախիջևանի հայ տիկինների շրջանում հաւաքված 394 ր. գումարը յօգուտ Վանի սովելոց, խոնարհաբար խնդրելով, որ բարեհաճէք հասուցանել այն ուր հարկն է։ Ահա նուիրատուների ցուցակը։

Վառվառա Քիշմեան 25 ր., Լուսիկէ Տրապզոնեան 15 ր., Հեղինէ Կէնճօղլեան 15 ր., Շողակաթ Շափրշնիկեան 15 ր., Հանգուցեալ Փանոսի և Գայանէի հոգուն 15 ր., Աննա Ալաճալեան 10 ր., Մարիամ Տրապզոնեան 10 ր., Խաժուն Մահդեսեան 10 ր., Գէորգ Խօճայեան 6 ր., Կատարինէ Ալաճալեան 5 ր., Աննա Ալաճալեան 5 ր., Խսկուհի Ալաճալեան 5 ր., Եւգենիա Վարդանեան 5 ր., Փ. Վարդանեան 5 ր., Սերովբէ Տրապզոնեան 5 ր., Կատարինէ Ճիվիլեկեան 5 ր., Նունիա Քառօժեկեան 5 ր., Մարիամ Հէքիմեան 5 ր., Աննա Քօղպեթեան 5 ր., Նուննա Օգարաչեան 5 ր., Երանուհի Շահպազեան 5 ր., Թուշիկ Նազիրեան 5 ր., Սրբուհի Պօստանճեան 5 ր., Մարիամ Թօխեան 5 ր., Տիրուհի Քօղպետեան 5 ր., Դշխուհի Մահտեսեան 5 ր.. Գայանէ Էնկէյեան 5 ր., Վառվառա Մրզապարօնեան 5 ր.. Տիկին Լիփա 5 ր., Եաղութ Ջօրչօփեան 4 ր., Լուսիկ Տէր-Գրիգորեանց 3 ր., Գեղեցիկ Սալթիկեան 3 ր., Փերսափէ Ալաճալեան 3 ր., Խսկուհի Խնձորեան 3 ր., Կուլաչ Յովհաննիսեան 3 ր., Ռուստինեա Սակիրեան 3 ր., Մարիամ Ախչեան 3 ր., Հռիփսիմէ Պօպօվեան 3 ր., Սրբուհի Մելքօնեան 3 ր., Վարդուհի Ալաճալեան 3 ր., Կատարինէ Կենճէյեան 3 ր., Ռուստինեա Յովհաննիսեան 3 ր., Կատարինէ Ալաճալեան 3 ր., Քերովբէ Տրապզոնեան 3 ր., Մարիամ Տրապզոնեան 3 ր., Յովհաննէս Խաթրանեան 3 ր., Եւգենիա Խաթրանեան 3 ր., Գեղեցիկ Օպէրեան 3 ր., Աննա Օպէրեան 3 ր., Օլինկա Նազիրեան 3 ր., Հեղինէ Յարութիւնեան 3 ր., Պայծառ Խնձորեան 3 ր., Սօֆիա Քայալեան 3 ր., Դշխուհի Խօճայեան 3 ր., Աննա Թօխեան 3 ր., Մարիամ Խնձորեան 3 ր., Բարսեղ Տրապզոնեան 3 ր., Փերսափէ Նալբանդեան 3 ր., Գայանէ Քարաքաշեան 3 ր., Դշխուհի Պարօնեան 3 ր., Գայանէ Էնկէյեան 3 ր., Մարիամ Խազէզեան 3 ր., Վարդուհի Պօպօվեան 3 ր., Ղուկաս Միէսերեան 3 ր., Պայծառ Ջօրչօփեան 2 ր., Քրիստինէ Ալաճալեան 2 ր., Հեղինէ Հայրապետեան 2 ր., Գէորգ Գեազկեան 2 ր., Օլինկա Քօղպետեան 2 ր., Սանդուխտ Ջուկայեան 2 ր., Փերսափէ Ալաճալեան 2 ր., Մարիամ Քեչէճեան 2 ր., Օլինկա Թիթրեան 2 ր., Տիրուհի Պալապանեան 2 ր., Կարապետ Թիթրեան 2 ր., Կարապետ Հայրապետեան 2 ր., Թագուհի Ալաճալեան 2 ր., Մարգարիտ Աճեմեան 2 ր., Խսկուհի Սաղեթեան 2 ր., Աննա Սաղեթեան 1 ր., Մարիամ Նալպանդեան 1 ր., Հռիփսի Ալաճալեան 1 ր., Մէլքայէլ Տրապիզոնեան 1 ր., Հռիփսիմէ Խազնադարեան 1 ր., Թագուհի Ջուբարեան 1 ր., Մարգարիտ Փափազեան 1 ր., Մարիամ Հալաճեան 1 ր., Եփրեմ Քօղպետեան 1 ր., Գրիգոր Թօխեան 1 ր., Սօֆիա Կաստանեան 1 ր., Մագդաղինէ Ջերնօվեան 1 ր., Մատթէոս Հայրապետեան 1 ր., Գոհար Տեվեճեան 1 ր., Տիրուհի Սաղեթեան 1 ր., Եփրէմ Խրմաճեան 1 ր., Մարիամ Ատթարեան 1 ր., Հոգևոր դպրոց 20 ր., ընդամենը 394 ր., հանելով այդ գումարէն փօստի ծախքը 2 ր. 31 կ., կը մնայ 391 ր. 69 կ.։

Տիկին * * *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են. «Չը նայելով որ Շիրակայ գաւառում հայոց հարիւրաւոր գիւղեր կան, բայց այդ գիւղերից ոչ մէկի մէջ մի փոքր ի շատէ կանոնաւոր տարրական դպրոց չը կայ։ Նորերումս պ. Ա. Պետրոսեան վարժապետը, աշխատել է համոզել մի քանի գիւղերի հասարակութեանը, որ Փալտըրվան կոչված գիւղում բացվի մի կենտրոնական դպրոց և այդ մասին հասարակութիւնը դիմել է Կարսի առաջնորդ սրբազան Աղուանեանցին թոյլտուութիւն խնդրելու։»

—

Մեզ պատմում են, որ ԹԻՖԼԻՍԻ հացթուխների գլխաւորը (ուստաբաշի), Աբրահամ Խուցիեվ ոչ թէ միայն հացթուխներից յօգուտ արուեստաւորների վարչութեան վերցվող հարկեր է պահանջում, բայց և հացի խանութ ունեցող և գիւղից վճարող խանութատէրերից։ Երբ հացթուխներից մինը ուշացաւ հարկը վճարելու, Խուցիեվ նրան կալանաւորել տուեց և արուեստաւորների գլխաւորի աջակցութեամբ երեք, չորս օրով նրան բանտարկել տուեց։ Կալանաւորվածը անդադար կըրկնում էր՝ «Ինչի էք բանտարկում, ես պատրաստ եմ փողը վճարել»։ Բայց նրան դարձեալ բանտարկեցին։ Առհասարակ ասում են որ Խուցիեվ հարկի օրինաւոր չափից միշտ աւելի է վեր առնում հացթուխներից, մանաւանդ մեր քաղաքի Թիւրքիահպատակ հացագործներից, որոնք մեր օրէնքների տեղեակ չեն։

—

Այս օրերս լոյս տեսաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ նոր ռուս թերթի առաջին համարը։ Լրագրի վերնագիրն է «Листокъ Кавказскихъ Объявленій.» Թերթի խմբագիրը պ. Խիթարօվն է։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ յօգուտ «Արարատեան» ընկերութեան ստացանք պ. Յովհաննէս Բաբաջանեանի ձեռքով հանգանակած 41 րուբլի։ Նուիրատուների ցուցակը կը տպենք։

—

«Голосъ» լրագրին գրում են Մոսկվայից որ Պուշկինի տօնախմբութեան ժամանակ եղած ճաշկերոյթին պատահեց հետևեալը։ Ռուս «Моск. Вѣд.» խմբագիր պ. Կատկով ճաշի ժամանակ վեր կացաւ տեղից և տուեց մի ճառ, որի մէջ յայտնեց, որ անցեալը պէտք է մոռանալ և Պուշկինի յիշատակի առաջև ամենքը պէտք է հաշտվեն։ Բայց ոչ ոք չը պատասխանեց Կատկովին, ոչ ոք չը մեկնեց իր ձեռքը դէպի նրա բարձրացած ձեռքը, ոչ ոք չուզեց խփել իր բաժակը նրա բաժակին,—և Կատկով շփոթված նստեց իր տեղը։ «Ահա այն մարդու պատիժը, ասում է «Голосъ» լրագիրը, որ ճաշի ժամանակ ասած ճառով կամենում է մոռանալ տալ իր քսան տարվայ ընթացքում արած դաւաճանութիւնները։» Ե՞րբ կը լինի որ և մեզանում, աւելացնում ենք մենք, հասարակական կարծիքը այնքան զարգանայ, որ այս կերպով պատժի տարիներով ստոր և զզուելի հասարակական գործունէութիւն վարող անհատներին։

—

Այս օրերումս անյայտացաւ ԹԻՖԼԻՍԻ ծածկած փողոցում, Բաղդալխանում առուտուր անող Ղորղանեան վաճառականը, տանը թողնելով ժամացոյցը և փողը։ Միւս օրը խեղճի դիակը գտան Նաւթլուղում, Կուր գետի մէջ և բերին տուն։ Խեղդվելու պատճառները զանազան տեսակ են բացատրում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Առանց դառն գանգատներ բառնալու և երեմիական ողբերգութիւններ ընելու, պէտք է սակայն գիտեմք թէ Հայաստանի գաւառներէն վերջերս եկած արժանահաւատ տեղեկութիւնք իրաց վիճակը մասնաւորապէս տխուր գոյներու տակ կը ներկայեն։ Երէկ նամակ մը հրատարակեցինք Վանէն, ուստից առ Պատրիարքարան ուղղեալ մի կարևոր հեռագրոյ ամբողջ պատճէնն հրատարակած էինք. անցեալ օր մեր նախընթաց թուովս Կարինէն ընդարձակ նամակ մը հրատարակեցինք. Բաղէշէն կարևոր լրագրի մը գրուած նամակին թարգմանութիւնն ալ երէկ հրատարակեցինք. անցեալ շաբթու մէջ Մուշէն մեզ գրուած նամակ մը հրատարակեցինք, և այսօր ալ նոր նամակ մը կը հրատարակեմք նոյն քաղաքէն մեզ գրուած։ Կարինէն և Վանէն գրուած ուրիշ բազմաթիւ թղթակցութիւնք ալ մեր անցեալ շաբթուան և այս շաբթուան թիւերուն մէջ տեսնուեցան արդէն։ Բոլոր այս տեղեկութիւնք Հայաստանի գլխաւոր գաւառաց արդի վիճակին վրայ նաև ընդհանուր գաղափար մը կուտան, որ քաջալերական չը կրնար համարուիլ անշուշտ։

Վանէն գրուած նամակներ սովու տառապանաց շարունակութիւնը կը ծանուցանեն, որոց վրայ աւելցած են Քրդաց աւանդական հարստահարութիւնք։ Մուշէն եկած տեղեկութիւնք հոն աղքատ ժողովրդեան թշուառու-